

Ա. ԼԱՎԼԻՆՈՎՈՎ

ԺԱՄԱԱԿԻՆ ՎԱՐԵԼ
ՅԵՎ ՄՅԱԿԵԼ ՄԱՔՈՒՐ ՅԵԼԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԻՆՍԻՍՏՈՒԹԻ
ՎԵՇՏՈՎԵԼԵՆԻ
Լամբանի Խաչ
СССР



ՀՐԱՄԱՎՐԱՋԱՊՈԽ. «ՀՅՈՒԽԱՎԵՐՆ ԿՈՎԿԱՅ»
ՈՂՈՑՈՎ-ԴՈՆ 1933

631.96
L-24

Ա. 487

631.96
L-24

Ա. ԼԱՎԱՐԵՍԿՈՎ
04 AUG 2010

ԺԱՄԱՆԱԿԻՆ ՎԱՐԵԼ
ՅԵՎ ՄՅԱԿԵԼ ՄԱՔՈՒՐ ՅԵԼԵՐԸ

ՇԽԱԼՈՂԵԱԴ
ԻՆՍԻՏՈՒԹ
ԵՎԵՏՈՒՅԵՆՈՒՅ
Բանական Խայտ
С. С. Р.



ՀՐԱՄԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ «ՅԱԼԻԿԱԿԱՅԻՆ ԿՈՎԿԱՆ»
ԹՈՍՏՈՎ-ԴՊՆ 1933

ՄԱՔՈՒՐ ՑԵԼՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ Ե ԱՇԽԱՏԱՑԱՆԵՐԻ ԲԵՐՔԸ

Հյուսիսային կովկասի կոլտնտեսությունները կուսի ղեկավարությամբ մեծ հաջողություններ են ձեռք բերել զյուղատնտեսության սոցիալիստական վերաբռնական գործում: Ընդպայնված են ցանքսատարածությունները, յուրացված են յերկարամյա անմրշակ հողերն ու ցեղերը: Սակայն 1932 թվին՝ առաջին հնգամյակի վերջին տարում, այդ հաջողություններն ու նվաճումները, դաշտային կոլտնտեսական մշակման ցածր ազդութեանի պատճառով, իշել ելին շատ կոլտնտեսություններում: Կուլակության մնացորդների կազմակերպած զյուղատնտեսական միջոցառումների սարստաժի պատճառով հողը մշակվեց վնասարարական անփութությամբ, ցանքսը կատարվեց վատ և ամփակամ: Իսկ չեղ վեռ հնուց հայտնի յե, թե՝ «ինչ կցանես, այն ել կհնձես»: Հողի վատ մշակման պատճառով կոլտնտեսություններից շատերը 1932 թվին այնքան չնշին բերք ստացան, վոր չկարողացան նույնիսկ կատարել հացի հանձնման նվազեցրած պլանը և կոլտնտեսականներին ապահովել անհրաժեշտ քանակության մթերքներով: Պետությունն ստիպված յեղավ կոլ-


անտեսություններից շատերին ողնության գալ վոչ միայն սերմացույով, այլ և մթերքներով: Հողի վատ մշակման պատճառով ստացած ցածր բերքը վոչ մի կերպով չարդարացվող և անհանդուրժելի յերեվույթ ե: Սոցիալիստական դաշտերը, հիմնվելով մեքենայական տեխնիկայի վրա և գործադրելով հողագործության գիտական կանոնները, պետք ե ուժեղ կերպով բարձրացնեն բերքատվությունը:

«Յերկորդ հնգամյակի կենտրոնական խնդիրը պիտի դառնա կոլտնտեսային յեվ խորհնենային դաշտերի բերքատվության վիճական բարձրացումը յել յերաշի դեմ պայմանական տնտեսության բարձրացման մասին բարձրացման բնագավառում XVII կուսկոնքերանսը»

Իսկ «Բերքատվության բարձրացման միջոցառումների մասին» ԽՍՀՄ-ի ժողովադրության կոմիտեի 1932 թվի սեպտեմբերի 29-ի իրենց վորոշման մեջ մատնամնում են՝

«Գյուղատնտեսության մեջ աշխատող բոլոր կուսական, խորհրդային, կոմյերիտական յեվ տնտեսական կազմակերպությունների աշխատանքն ուղղել բարձրացնելու առանց բացառության բոլոր տեսակի մշակույթների բերքատվությունը, վորպես գյուղատնտեսության զարգացման կենտրոնական խնդիրը սվյալ մոմենտում»:

Այս վորոշումներից յերեվում ե, թե կուսակցությունն ու խորհրդային իշխանությունն ինչպես են բարձրացնելով կոլտնտեսականների և խորհնտեսությունների բանվորների ուշադրությունն ըերբատվության բարձրացման՝ վորպես վողջ Խորհրդային Միության կարևորագույն խնդրի շուրջը:



60214-67

Յերկրորդ հնգամյակի առաջին գարնանացանը ցույց
տվեց, վոր ամեն տեղ ել նկատելի կերպով բարելավ-
վել ե հողի մշակումը և ցանքսի վորակը։ Յեվ միայն
այն կոլտնտեսություններում, ուր դեռ մնացել են կու-
լակային պոչերը, կոլտնտեսային կառուցվածքի թըշ-
նամինները, ուր տեղի ունի ինքնահոսը, ուր կուսակ-
ցական կազմակերպությունները չեն գլխավորել բերքի
համար մղվող պայքարը, —նկատվում են վասարա-
րական ցանքսի և վատ մշակման դեպքեր։ Ցանքա-
փախություն մօցնելը, ցանքսի ժամկետերի կրնառումը,
գարնանացան վեակույրների համար նողն աշեան
վաելը, իսկ շարքահերեկերի համար ցելը հանդիսա-
նում են սոցիալիստական դաշտերի նիմնական ագ-
րուսելնիկան։

Այժմ կանգ առնենք ցել անելու նկարագրության
վրա, վորը կարեոր նշանակություն ունի աշնանա-
ցան հացարույսերի բերքի բարձրացման գործում։

Աշնանացան հացարույսերը մեր յերկրամասի կա-
րեփոր հացարույսերն են։ 1932 թվին յերկրամասում
ցանված եր մոտ 4 միլիոն հեկտար ցորեն և հա-
ճար և մոտ 2 միլիոն հեկտար գարնանացան ցորեն։
Աշնանացանով բռնված հողի շերտը ապրանքային և
մթերային հացահատիկի արտադրությամբ վճռական
նշանակություն ունի մեր յերկրամասում։ Մինչդեռ
1932 թվին հենց աշնանացան հացարույսերի բերքը
շատ ցած եր, մանավանդ կուբանի ռայոններում, ուր
աշնանացանը բռնում եր մեծ տարածություն։ Այդ
պատճառով այս տարվա աշնանացանի բերքատվության
բարձրացման համար հենց այժմ պետք է գործադրել
ու եղ միջոցառություններ։

Կոլտնտեսականների մեծ մասը գիտե, վոր աշ-
նանացան հացարույսերի բերքատվության բարձրաց-

ման ամենագլխավոր միջոցն ե հանդիսանում ցել
անելը։

Ամառվա ընթացքում վարած հողի մաքուր գրու-
թյամբ թողնելը և նրա մի քանի անգամ մշակումը
ստեղծում են աշնանացան հացաբույսերի բերքատվու-
թյան բարձրացման ապահովման լավագույն միջոցներ։
Առաջավոր խորհանտեսություններն ու կոլտնտեսու-
թյունները լայնորեն գործադրում են աշնանացանի
համար ցել անելը։ Սակայն ցելերը դեռ այն տարա-
ծումը չեն ստացել, վորին նրանք արժանի յեն։

Այդ պատճառով ԽՍՀՄ-ի ժողկոմիորելը և ՀԿ(բ)Կ
կենտկոմը ցել անելու և հասկավորների բերքահավաքը
կազմակերպելու մասին իրենց 1933 թ. հունվարի 24-ի
վորոշմամբ պարտավորեցնում են մեր յերկրամասն
ապահովել 1.248.000 հեկտարի ցել անելը, վորի թվում
560.000 հեկտար կոլտնտեսություններում։

Այդ վորոշումը պարտավորեցնում է հողի ցել ա-
նելը ձիերով, վորոնք պետք ե ընդգրկեն չորային և
կիսաչորային գոտու կոլտնտեսությունների մեծ մասը։
Բայց, վորպեսզի ցել անելը ձիշտ կերպով լուծի աշ-
նանացանների բերքատվության բարձրացման խնդիր-
ները, յուրաքանչյուր բրիգադիր, յուրաքանչյուր
կոլտնտեսական պետք և լիովին յուրացնեն ցելի դաշ-
տում կատարվող յուրաքանչյուր աշխատանքի նշա-
նակումը։

ԻՆՉՈ՞Ի ՑԵ ՄԱՔՈՒՐ ՑԵԼԸ ԲԱՐՁՐԱՑՆՈՒՄ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Հացարույսերի բերքի հիմնական պատուհաս — մո-
լախոտերն իրենք չեն վոչնչանում դաշտերից։ Նրան-
ցից կարելի յե ազատվել միայն համառ պայքար մը-

ղելով նրանց դեմ, նրանց աճման ժամանակ, յերբ կատարվում ե աշնանավար և հողի վերի շերտը շուր ե տրվում: Առանձնապես լավ են վոչնչանում մոլախոտերը շարքահերկ մշակույթների մշակման ժամանակ, վորովհետև շարքահերկ դաշտում ամառվա ընթացքում մի քանի միջշարքային մշակում ե կատարվում:

Այդ մշակումները վոչնչացնում են միամյա և բազմամյա մոլախոտերի (ովայուկ, սուրեպա) մի քանի անգամված ծիլերը և ճնշում այնպիսի բազմամյա մոլախոտերին, ինչպես՝ տատասկը և այն: Բայց մոլախոտերի դեմ ամենալայն պայքարն ապահովված ե ցելի դաշտում, յերբ ամբողջ ամառվա ընթացքում դաշտը վոչ մի մշակույթով չի բռնված: Այդպիսի դաշտերում շատ հեշտությամբ կարելի յե գործադրել տրակտորային և ծիռ լայն տարածություն բռնող գործիքներ, վորոնցով կարելի յե մի քանի անգամ մշակել դաշտի մակերեկույթը: Հիմնական հերկից հետո, այդ շատ անգամ կատարվող մշակումների միջոցով, ամառվա ընթացքում մի քանի անգամ կտրատվում են աճող մոլախոտերը և զգալիորեն պակասում ե սերմերի պաշարը, վորի պատճառով դաշտերն ազատվում են տատասկից հաստրակ սեղից և այլ մոլախոտերից: Մաքուր ցելի այդ հատկությունը դնում ե նրանց մոլախոտերի դեմ պայքարելու բոլոր ազրոտեխնիկական միջոցների առաջնակարգ տեղը:

Մոլախոտերի դեմ պայքարելու միջոցառումներից վոչ մեկը չի կարող համեմատվել իր ազդեցույթամբ մայութ ցելերի ներ:

Այդ կողմից մաքուր ցելը մոլախոտերի դեմ պայքարելու ամենառաջեղ միջոցն ե հանդիսանում չյուղիսային կովկասի բոլոր ուայոններում:

ՄԱՔՈՒՐ ՑԵԼԸ ՅԵՐԱՇՏԻ ԳԵՄ ՊԱՑՔԱՐԵԼՈՒ ԱՄԵՆԱԼՎՎ ՄԻԶՈՅՆ Ե

Բացի մոլախոտերից, վորոնք ամեն տարի իջեցնում են աշնանացան հացաբույսերի բերքատվությունը յերկրամասի արեւելյան և հյուսիսային ույանների մեծ մաքում, հացաբույսերը վնասվում են և յերաշտից: Զուր չե, վոր այդ ուայոնները կոչվում են չորային ուայոններ:

Աշնանացան հացաբույսերն այստեղ ավելի կայուն բերք են տալիս, քան գարնանացանները: Առանձնապես լավ հաջողություն ունի այստեղ հաճարը: Սակայն աշնանացանի համար հողի մշակման դեպքում, առանց ցել անելու, առանձին տարիներում հացաբույսերի բերքն այստեղ իջնում ե մինչև -1-1^{1/2} ցենտներ մեկ հեկտարից: Այդպես եր 1921 թվին, իսկ առանձին ուայոններում՝ և 1924 թվին, և 1926, և 1927 թվերին: Նույն այդ տարիներին աշնանացան հաճարը և աշնանացան ցորենն իրենց բերքատվությամբ քիչ եյլն տարբերվում գարնանացաններից, իսկ մաքուր ցելերի աշնանացաններն այդ չափազանց չորային տարիներին տվել եյլն համեմատաբար բարձր բերքեր—մեկ հեկտարից՝ 6—8 ցենտներ: Առանձնապես մեծ ե մաքուր ցելերի նշանակությունը յերկրամասի այդ չորային մասերի աշնանացան ցորենի համար, վորն այստեղ վնասվում ե վոչ միայն յերաշտից, այլ և ձմեռվա ցրաերից և քամիներից: Իսկ վորովհետև աշնանացան ցորենը բոլոր դեպքերում ել հանդիսանում ե վորպես արժեքավոր հացահատիկ, ապա նրա բերքատվության կայունությունը պետք ե ապահովվի այստեղ մաքուր ցելերի լայն պարտադիր գործադրմամբ:

Նայած, թե յերբ ե կատարվել առաջին վարը, մաքուր ցելերը կոչվում են սև, յեթե նրանք հերկվում են աշնան, ապրիլյան՝ յեթե հերկվում են ապրիլին, մայիսյան, հունիսյան՝ յեթե հերկվում են մայիսին և հունիսին:

Բացի այդ ցելերի, վորոնք ապահովում են հողի մակերևութիւնի մշակումն ավելի քան ամառվա կեսի ընթացքում, կան և ավելի ուշ ցելեր, վորոնք հերկվում են հուլիսին—ոգոստոսին:

Այդպիսի ուշ ցելերի վրա քիչ մշակումներ են կատարվում, յերբեմն գործը վերջանում է առաջին հերկումով և տափանումով։ Այդ պատճառով ուշ ցելերը ննարավորություն չեն տալիս վճռականորեն վոչչացնել մոլախոտերը և, վորպես խոնավության կուտակման միջոց, անարժեք են, վորովհետեւ ամառվա առաջին կեսի և ամառվա միջին ամիսների անձրևների ջրերը ուշ վարած այդպիսի դաշտերում վոչ պահպամ են և զու ել ծծվում։

Զանազան տեսակ ցելերի առավելությունների խնդիրը լուծելու համար, պետք ե իմանալ, թե աշնացան հացարույսերն ինչպիսի բերք են տալիս տարբեր ցելերում։

Եջ 9-ի աղյուսակից յերեվում ե, վոր ապրիլին, մայիսին վարած վողջ ցելերը տալիս են ամեն տեղ աշնացան ցորենի և հաճարի ամենաբարձր բերք։ Միայն կուբանի փորձակայանում մաքուր ցելի աշնանացան ցորենի բերքը քիչ ե տարբերվում շարքահերկ նախորդների բերքից։ Այդ բացարարվում ե նրանով, վոր կուբանում, բավարար խոնավության պայմաններում, մաքուր ցելը, վորպես խոնավության կուտակման

Կայանների անունները	Դումակների առավելագույն թիվը	Աշնանաց ան ցորենի բերքագությունը ցելական բերքում 1 հեկտարից					
		Վաղ	Միջին	Ուշ	Խերան	Հարթ հերկ	Ցածրաց հերկ
1. Ռոստովի	10	15,2	—	—	—	8,5	7
2. Յեյսկի	4	15,2	—	—	—	12,0	10
3. Դոնեցյան	7	16,7	11,5	11,2	10,2	6,2	—
4. Յագորիկսկի	4	10,2	10,1	7,3	—	7,3	—
5. Կուբանի	4	22,0	21,0	19,3	—	20,0	14,7

միջոց, նշանակություն չունի։ Փորձակայանների մաքուր դաշտերի պայմաններում, ուր կատարվել են փորձեր, մաքուր ցելը, համեմատած շարքահերկ նախորդների հետ, առավելություն չի ցուցագրում և վորպես դաշտերը մոլախոտերից մաքրելու միջոց։ Բայց և կուբանի կոլտնտեսությունների և խորհուտեսությունների մոլախատակալած հողերում մաքուր ցելը հանդիսանում է վորպես մոլախոտերի դեմ պայքարելու հզոր միջոց և բարձրացնում է մաքուր հողերի աշնանացան ցորենի բերքը, համեմատած բոլոր մյուս նախորդների հետ։ Դրա մասին պերճախոսությամբ վկայում է 1932 թվի փորձը, յերբ կուբանի կոլտնտեսություններն ու խորհուտեսությունները հավաքում եյին մաքուր ցելի մեկ հեկտարից 18—20 ցենտներ բերք, մինչդեռ մոլախոտակալած հողերի մեկ հեկտարից՝ ընդամենը 4—5 ցենտներ։

Այսպիսով նույնիսկ կուբանի հողերը, մոլախոտերի դեմ պայքարելու տեսակետից, մոլախոտերով վարակված հողերի համար զգում են մաքուր ցելերի դորձադրման կարիքը։ Բայց կուբանի փորձակայանի

տվյալների, մոլախոտերը սովորաբար տասնյակ անդամ քիչ են լինում մաքուր ցելում, քան ուրիշ նախորդներում Սակայն, յեթե կուբանում մաքուր ցելերը մեծ նշանակություն ունեն, վորպես մոլախոտերի վոչնչացման ձիգոց մոլախոտերով ծածկված դաշտերի համար, ապա բոլոր չորային և կիսաչորային ռայոնների համար մաքուր ցելի նշանակությունն անհամեմատ աճում է, վորովիեռեւ այստեղ նա ստանում է նոր հատկություն։ Մաքուր ցելն այստեղ ծառայում է, վորպես յերաշտից պաշտպանվելու միջոց։

Աշնանացան հաճարը վաղ ցելերի վրա տալիս ենույնպիսի բերք, ինչպես և աշնանացան ցորենը։

Թե վորքան մեծ և մաքուր ցելի, վորպես ամառային անձրեների ջրերի կուտակման և պահպանման միջոցի նշանակությունը, դա հայտնի յեւ յուրաքանչյուր կոլտնտեսականին, վորն ոգոստոսյան շոգերին մոտեցել և շոշափել եւ ցել արած դաշտի մակերեսը։ Այդպիսի պայմաններում, նույնիսկ ամենաուժեղ յերաշտի ժամանակ, ցել արած դաշտի հողի փոքր խորոված մեջ կա խոնավություն, վորի շնորհիվ հողը շատ փիսրուն եւ։ Այս գործնական դիտողությունները բացատրվում են փորձակայանների յերկարամյա հետախուզումներով։

Սարատովի հացահատիկային տնտեսության ինստիտուտի դիտումներով, մոլախոտերը հանդիսանում են իսկական ջրահան մեքենաներ, վորոնց միջոցով դուրս եւ հանվում հողի մեջ յեղած ամբողջ ջուրը։ Այսպես, այն դաշտում, վորտեղ մոլախոտերը չեն վոչնչացված, մեկ մետր հաստության հողի ջրի ծախսը 7,5 անգամ ավելի յեւ, քան այն դաշտում, ուր մոլախոտերը վոչնչացված են։ Սա ցույց եւ տա-

լիս, վոր ցել արած դաշտը ավելի խոնավություն եպար ունակում, քան ցել չարածը և վոր վաղ ցելի խոնավությունն ավելի յեւ, քան ուշ ցելինը։

Յեյսկի փորձակայանում 1928 թվին գետնի խոնավության պաշարը 1 մետր հողաշերտում սեպտեմբերի 21-ին (աշնանացան) արտահայտվում եր.

Վաղ ցելում	19,6	0/0
Արեվածաղկի դաշտում	13,3	»
Ուշ ցելում	15,2	»

Վոլգայի շրջակայքի չորային մասում գտնվող կրասնոկուտսկի փորձակայանում գետնի խոնավությունը ցանելու մոմենտին (50 սանտ. խորության շերտում) այսպես եր.

Վաղ ցելում	20,8	0/0
Ուշ »	14,8	»
Շարքահերկում	14,1	»
Յել չարած դաշտ.	13,5	»

Վաղ ցել արած գետնի ունեցած մեծ խոնավությունը բացատրվում է նրանով, վոր վաղ ցելի ժամանակ արած մշակումների շնորհիվ վոչնչացված են այն մոլախոտերը, վորոնք քաշում են վարած հողի շերտում պարունակող ամբողջ խոնավությունը։

Վաղ մայուր ցելերի դերը չորային ռայոնների համար ամելի մեծ և այն պատճառով, վոր երանեց այսեղ ապահովվում են վոչ միայն բարձր, այլ յեւ մեսական, կայուն բերեց:

Քննենք փորձակայանների հետևյալ որինակները։ 1927 թվին Յեյսկի փորձակայանում, յերբ մայսիս և հունիս ամիսների ընթացքում յեղան 23 միլիոն մթնոլորտային տեղումներ, միջին 100.ի դիմաց,

այդ յերկու ամիսների ընթացքում զանազան նախորդների վրա աշնանացան ցորենի բերքը մեկ հեկտարից ցենտներով հետևյալն եր:

ապրիլյան	ցելից — 14,8
մայիսյան	» — 13,6
յեգիպտացորենի	» — 11,2
սուլանկայի	» — 7,2

Ավելի հետաքրքրական դիտումներ են արել Դոնեցյան և Խերսոնյան փորձակայանները: Խերսոնյան փորձակայանում յերեսուն տարվա ընթացքում յեղել ե յերեք չորային տարի: Այդ տարիների ընթացքում աշնանացան ցորենի բերքը մեկ հեկտարից ցենտներներով յեղել ե այսպես.

Տարիներ	Նախորդներ		
	Վաղ ցել	Ուշ ցել	Ցել չարած
1896	9	1,2	մոտ 1 ցենտներ
1899	6	0,5	
1921	8,5	2,5	0,7

Դոնեցյան փորձակայանում իննը փորձի տարիների 2 չերքը տարում աշնանացան հաճարը զանազան նախորդների վրա բերք տվեց ցենտներով մեկ հեկտարից՝

Տարիներ	Վաղ ցելում	Ուշ ցելում	Ցել չարած
1911 թ,	12,5	10,0	1,5
1921 թ.	8,5	4,0	2,0

Դոնի փորձակայացառում 13 տարվա փորձի ընթացքում ամենացածր բերքը վաղ ցելում յեղել ե մոտ 9 ցենտներ, ուշ ցելում՝ 2,5 ցենտներ: Սյսպիսով, վաղ մաքուր ցելը չորային տարիներին և չորային գոտում ապահովում ե բավականին բարձր բերք, այդ պատճառով ել նա հանդիսանում ե փորպես յերաշտի դեմ պայքարելու ապահովող միջոց, վորն ամեն տեսակ պայմաններում հնարավորություն ե տալիս բավականին բարձր բերք ստանալու: Սրա մեջ ե կայանում վաղ մաքուր ցելերի ուժը չորային ուայոններում: Պետք ե նկատի առնել, վոր մաքուր ցելերն ապահովում են աշնանացանների բարձր և կայուն բերքը, բարձրացնում են գարնանացան հացարույսերի բերքը, վորոնք գալիս են աշնանացաններից հետո:

Սյսպես, Կրամնոկուտակի փորձակայանում գարնանացան «ոռուսակ» ցորենը, վորը գալիս ե հաճարից հետո, վեց տարվա ընթացքում ցելում տվեց միջին հաշվով 1,5 ցենտներ ավելի ցորեն, քան ցել չարած ցանքսաշրջանառության մեջ յեղածը (10,4 ցենտներ, 1 հեկտարի 8,8 ցենտների փոխարեն):

Յեյսկի փորձակայանում 1926 և 1928 թվականներին գարին տվեց 2—3 ցենտներ ավելի այն գեպերում, յերբ նա զնում եր մաքուր ցելի աշնանացանից հետո:

Այս բոլոր ասածներից յերկում ե, վոր վաղ մաքուր ցելերը հանդիսանում են առևանացան հացարույսերի բարձր յեզ կայուն բերքի համար պայմանականություն միջոցը:

ՅԵՐԻ ՎԱՐԵԼ ՑԵԼԵՐԸ

Պարզելով ցել անելու հիմնականնշանակությունը, հեշտ է հասկանալ, վոր վաղ ժամկետերին կուտակված վարը ամենից լավ է ապահովում հաջող պայքարը մոլախոտերի դեմ և խոնավության պահպանումն ու կուտակումը գետնի մեջ։

Կրամնոկուտակի փորձակայանում պարզված է, վոր մոլախոտերի քանակն աշնանացան գարու մեջ մայիսի միջին աճում է, կախում ունենալով հաճարի համար ցելի վարելու ժամկետերի ուշացումից։
 Վաղ ցելում մոլախոտակալումը հաշվում եր 11,0
 Միջին » » » » 22,4
 Ուշ » » » » 111
 Ցել չարած » » » » 234

Դոնի փորձակայանի 1921 թվի դիտումները ցույց են տալիս, վոր ուշ ցելի աշնանացան ցորենն ապառաված եր մոլախոտերով։ Առանձնապես ուժեղ կերպով զարգացել ելին այստեղ ավելի մեծ ֆլանկեր հասցնող բազմամյա մոլախոտերը, ինչպես այդ յերեվում ե աղյուսակից։

Աշնանացան ցորենի մեջ գտնվող մոլախոտերի քանակը 1 քառ. մետրում։

Մոլախոտերի տեսակները	Ցել անելու ժամկետը		
	Ապրիլ ամսվա	Մայիս	Հունիս
Միամյա մոլախոտեր	242	264	294
Յերկամյա » . . .	5	2	9
Բազմամյա » . . .	3	46	165
Ընդամենը	250	312	468

Բացի դրանից, վաղ ցելը հնարավորություն ե տալիս կուտակել զարնան խնավության առաջ պաւարը յեվ, վերջապես, անձրեվների ամբողջ ջուրն, անցնելով վարած հողի մեջ, պահպում է փիխուն հողում, իսկ չվարված հողում չեն պահպում, հոսում են և վոչ մի ոգութ չի տալիս բերքին։

Այդ պատճառով ել պահանջվում է վարել ցելը ըստ հնարավորության շուտ, վաղ գարնան չենց վոր ավարտված են վաղ գարնանանացանքսի աշխատանքները, պետք է լծկանն ու մերենաներն ուղղել ցելերը վարելու։

Ահա ինչու ԽՍՀՄ-ի ժողկոմիսորնի և ՀԿ(Բ)Կ կենտկոմի 1933 թվի մայիսի 24-ի «Յերերի վարելու յեվ հասկայի հեների բերքահավաքը կազմակերպելու մասին» փորոշման մեջ հայտարարվում է՝

«Տերվի—Սավրովոյի ույյոնում ցելերի վարն ավարտել մինչեվ հունիսի 15-ը, իսկ յերկրամասի մենացած ույյոնիներում մինչեվ հուլիսի 10-ը։

Յուրաքանչյուր կոլտնտեսություն, ինչ միջոցներով ել լինի, պետք է կատարի ցելը վարելու ժամկետերը։ Հյուսիսային և արևելյան ույյոնների կոլտնտեսությունները պետք է աշխատեն ցելի վարն ավարտել փորքան հնարավոր և շուտ, փորպեսզի պահպանվի գարնանային խոնավությունը և վարած դաշտում ամառվա անձրեների խոնավությունը։

ՑԵԼԸ ՎԱՐԵԼՈՒ ԽՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ

Վորպեսզի ցելի վարն ապահովի խոնավության կուտակումն ու պահպանումը և լինի մոլախոտերի վոչնչացման միջոց, պետք է հիմնավորապես կատարել առաջին վարը 15—18 սանտ. խորությամբ, իս-

կական որիգինալ գութաններով, նկատի առնելով մոլոխոտերի չափը, կազմը և հողի դրությունը: Այն հողերը, վոր վարակված են հասարակ սեղով, պետք է վարել 12 սանտ. խորությամբ: Այդպիսի խորությունը հնարավորություն է տալիս ընդգրկել սեղի արմատների հիմնական մասսան: Միայնա խոտերով վարակված լինելու դեպքում, պետք է վարել 15—18 սանտ. խորությամբ:

Տատասկափշերով բռնված հողերը պետք է վարել 18 սանտ. խորությամբ: Միայն այդ խորության վարը կվոչնչացնի տատասկի արմատները և հնարավորություն չի տա բազմանալու սերմերի միջոցով:

Շատ փորձակայաններում վարի խորության խճութիրը հեաազոտվել է մաքուր դաշտերի սպայմաններում, ուր վարի խորությունն առանձնապես յերկան չի յեկել: Այս հանգամանքն առիթ տվեց թեթևամիտ յեղակացությունների, վորը և ոգտագործվեց գյուղատնտեսների ֆլամարար մասի կողմից՝ կոլտնտեսային դաշտերը մոլախոտակալելու կազմակերպման համար:

Միշարք ՄՏ կայանների 1932 թվի աշխատանքի որինակների հիման վրա կարելի յե հաստատել, վոր մանր վարն ամենալիտի կերպով ոգտագործվել եր դասակարգային թշնամու կողմից՝ կոլտնտեսային դաշտերի բերքատվությունն իջնեցնելու նպատակով:

Մանր վարն ել վար ե, յեթե նա կատարված է կանոնավոր կերպով: Իսկ անցյալ տարի դաշտերի մեծ մասը վոչ թե վարված, այլ չանգուստված եյին: Այդպիսի վարի դեպքում դաշտերի մակերեսը չեր փիրանում և մեծ քանակությամբ բազմացյա մոլախոտեր մնում եյին առանց ֆլամվելու:


Պետք է նկատի ունենալ, վոր շատ անգամ, յերբ յերկրամասում ուշացնում են առաջին վարը, հողը

խիստ չորանում ե և այդ դեպքում մանր վարի համար սարքած գութանը հաճախ գուրս կընկնի, այդ պատճառով, բարեխսիղ կերպով վերաբերվելով կոլտնտեսային գործին, յուրաքանչյուր կոլտնտեսական այդ դեպքում գութանը դնելու յե ավելի խոր վարի համար:

Այդպես ել եր այն դեպքում, յերբ գութանի կամ տրակտորի կցորդի հետևից գնում եյին բարեխսիղ կոլտնտեսականներ, և բրիգադը և կոլտնտեսությունը զեկավարում եյին բոլշևիկները: Իսկ այն դեպքում, յերբ գութանի հետևից գնում եր դասակարգային թշնամին, և վարչության մեջ նստել եյին շյապանները և դասակարգային թշնամուն հետևողները, մանր վարի համար սարքած գութանը չեր վերասարքվում: Այդ դեպքում նրանք վոչ թե իսկական վար եյին անում, այլ միայն ձեկ համար: Այդ ֆլամարարական վարի արդյունքը լինում եր այն, վոր դաշտերը բռնվում եյին մոլախոտերով: Վոր վարի խորությունը ազդեցություն ունի դաշտերի մոլախոտերի վրա, սովորեցրեց մեզ Բուզովկովի փորձադաշտը: Այդ դաշտի դիտողությունները ցույց են տալիս, վոր ինչքան վարը, տինքան ել պակասում են մոլախոտերը:

Վարի խորությունը.	Մոլախոտա- վարակումը %-%	ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՆՍՏԻՏՈՒ ՏՈՒՆՆԵՐԸ ԱԿԱԴԵՄԻ ԱԿԱДЕՄԻ
10 սմ.	100	ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՆՍՏԻՏՈՒ ՏՈՒՆՆԵՐԸ ԱԿԱԴԵՄԻ ԱԿԱДЕՄԻ
15 »	70	
20 »	40	

Նորմալ խորության վարը կարելի յե կատարել միայն իսկական կորպուսավոր գութանով: Վոչ ցորենի և վոչ ել ուրիշ գութանները չպետք է գործադրվեն ցելի առաջի հետական վարի համար:



Դոնի փորձադաշտում՝ միջին հաշվով 11 տարվա
ընթացքում մայիսյան ցելի աշնանացան հաճարի
բերքը հետևյան է յեղել.

Յեթե վարն արվել է 26,6 սանտ. խորությամբ,
ապա 1 հեկտարից ստացվել է 19,5 ցենտներ, յեթե
17,7 սանտ. խորությամբ, 1 հեկտարից՝ 19,1 ցենտ-
ներ և յեթե 8,8 սանտ, խորությամբ, 1 հեկտարից
ստացվել է 17,6 ցենտներ:

Խորը վարի նշանակությունը մատնանշված է ժող-
կոմիսորի և կենտրոմի 1933 թվի մայիսի 24-ի վո-
րոշման մեջ։ Այնտեղ ասված ե.

«Ապահովել ցելերի խորունիկ վարը յեվ վարի հա-
մար գործադրել բացառապես թեվափոր գործանեներ»։

ԽՆԱՄԵԼ ՑԵԼԱԴԱՇՏԻ ՄԱԿԵՐԵՍԸ

Գարնանից հերկված ցելն իսկույն պետք է յերկու-
հետքով տափանիվի «Զիգ-զագ» տափաններով։ Յեթե
ցելադաշտում վերաբրմատի մոլախոտերը շատ են, ապա
պետք է տափանները գործի գնել մի քանի հետքերով։
Տափաններիս անհրաժեշտ է հաճախ բարձրացնել տա-
փանը և պոկված մոլախոտերը կույտերի մեջ հավա-
քել։ Կույտերի չորանալուց հետո նրանց պետք է այ-
ցել Առաջին տափաննումը պետք է կատարել անպայ-
ման վարելուց անմիջապես հետո, վորպեսզի հնարա-
վոր լինի պահպանել խոնավության այն պաշարը, վոր
կա ցելադաշտում հերկելու մոմենտին։ Ցելադաշտի
տափաննումն այն արդյունքն է ունենում, վոր հետա-
գայում հեշտ կլինի մշակել դաշտը։ Իսկ յեթե վարե-
լահողը հանդիսան թողնվի և չտափանիվ, ապա հողա-
կոշտերով ծածկված մակերեսը կարող է չորանալ և
հետագա ամբողջ մշակումը կդժվարանալ։

Այսպես ուրեմն, տափանելու նպատակն է ցելա-
գաշտը ծածկել փսրուն «վերմակով», վորը պահպա-
նում է հողը չորանալուց և հեշտացնում է հետագա
բոլոր աշխատանքները։

Սակայն ամեն ժամանակ հնարավոր չե տափանել
վարելուց հենց անմիջապես հետո, իսկ յերբեմն ել
ապարդյուն կարող է լինել։

Որինակ, յեթե հողը հերկվի ուշ և չոր յեղանա-
կին, այն ժամանակ գութանը շուռ կտա հողի չոր
«կուրծքքը», վորը չի տափաննվում։ Այս զեպքում ցելը
տափաննումը հարկավոր է հետաձգել մինչև առաջիկա
անձրեւ։ Անձրկից անմիջապես հետո անպայման պետք
է տափանել, վորպեսզի մոլախոտերի սերմերին հնա-
րավորություն արվի աճելու և հարմար լինի դաշտը
հետագայում մշակելու։ Վերջապես, այն դեպքում,
յերբ ցել է արգում այնպիսի մի հող, վորը ծածկված
է հասարակ սեզով, ապա նպատակահարմար է այս-
պիսի դաշտը թողնել առանց տափաննելու։ Չտափան-
ված դաշտը ամառվա տաք արևի տակ չորանում է
մինչև խորը և սեզի արմատները վոչնչանում են։ Սա-
կայն այսպիսի ցելը չի ապահովում ջրի կուտափումը
և պահպանումը և այսպիսով կորցնում է մաքուր ցելը
իր կարենորագույն վորակներից մեկը։ Այդ իսկ պատճա-
ռով այսպիսի ցելը պետք է կիրառել միայն սեզով
վարակված հողերի համար։

ՄՈԼԱԽՈՏԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԵԼԸ—ԴԱՇՏԵՐԻ ՄԱԿԵՐԵՍԻ ՄՇԱԿՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐ Ե

Ցելադաշտի մակերեսի այն բոլոր մշակումները,
վորոնք կատարվում են առաջին վարեց հետո, նպա-
տակ պետք է ունենան վոչնչացնելու մոլախոտերը։

Արդեն վարելուց և տափանելուց 10—15 որ հետո, հողի մակերևույթի վրա սկսում է կանաչել մոլախոտերի տունիրը: Այսուեղ կանաչում են միամյա մոլախոտերի (տատասկի, կողաք և այլն) ծլերը, տատասկի և սեղի արմատներից բնող ճյուղերը: Մոլախոտերի այս ծլերը պետք է վոչնչացվեն գաշտի մակերեսը մշակելու միջոցով:

Չիով աշխատող բրիգաֆներում մոլախոտերը վոչնչացնելու ամենալավ գործիքը—դա սովորական բազմախոփանի արորն ե: Նա հիանալի կերպով կտրատում է մոլախոտերը: Վորպեսզի հնարավոր լինի խուսափել հողն ավելորդ տեղ շուռ տալուց և չորացնելուց, դրան համար ցելադաշտը մշակելիս, հարկավոր է հանել բարմախոփանի արորների թեփերը:

Տրակտորային բրիգաֆներում հողամշակումը հաջողությամբ կարող է անցկացվել տրակտորային բազմախոփանի արորներով կամ հատուկ թաթավոր կուլտիվատորներով:

Ցելը մշակելիս տրակտորային արորների թեփերը նույնպես պետք է հանել:

Հասարակ սեղով, լոշով և ոստրեցով վարակված հողերը մշակելու համար պետք է գործադրել տափաններ ունեցող զսպանակավոր կուլտիվատորներ: Այդ մոլախոտերի արմատներն անհրաժեշտ ե գուրս բերել հողի յերեսը, չորացնել և այրել: Այսպիսի հողերի համար գիտկավոր գործիքներն առհասարակ չեն գործադրվում: Ցելադաշտի մակերեսի այսպիսի մշակումը վոչնչացնում է միայն մոլախոտերի հայտաբերվող ծլերի առաջին պարտիան: Սեղի և տատասկի արմատները վոչնչացված ճյուղերի փոխարեն արձակում են նորանոր ճյուղեր: Դրա համար ել մի անգամ ար-

ված մշակումը չի վճռում ցելերը ինամելու բոլոր խնդիրները:

Մոլախոտերը կտրատող գործիքներով կատարված հողամշակումը պետք է կրկնել 2—3 անգամ, նայած մոլախոտերի աճման չափին: Ամառն ինչքան անձրեվաբեր լինի, մոլախոտերն այնքան ավելի առատ և կանոնավոր են աճում: Այդ իսկ պատճառով անձրեվային ամռանը հողամշակումների թիվը պետք է ավելացներ:

ԽՍՀՄ-ի ժողովունիքի և ՀԿ(բ)Կ կենտկոմի 1933 թվի մայիսի 24-ի հատուկ գորշման մեջ տակած ե: «Մինչեվ աւելանացանք ցելերի մեակրումն անցկացնել 2—3 անգամ, նայած թե ինչ չափով են յերեվան գալիս գաւառներում մոլախոտերը»:

Ցեթե ցելադաշտը խնամքով մշակվի, նա ամռան վերջում կազակվի միամյա մոլախոտերից, վորոնք հաճախակի կտրատման միջոցով ամբողջովին անվնաս են դառնում:

Իսկ ցելադաշտի կրկնակի մշակումները վերջնականացնեն վոչնչացնում են նաև բազմայա մոլախոտերը: Սեղ, լոշ և ոստրեց մոլախոտերի արմատները, արորներով գաշտը մշակելիս և արմատները պոկելիս, կարող են ամբողջովին վոչնչանաբ նույնիսկ տատասկը, այս ամենալավ տեսակի մոլախոտը վոչնչանում ե, յեթե դաշտը կուլտիվատորով հաճախ մշակվի: Սակայն տատասկի դեմ պայքարելիս պետք է ունենալ բացառիկ համբերություն և համառություն: Դնեպրովետում կամաց գործական գիտողությունները ցույց են տալիս, զոր առաջին կուլտիվացիայից հետո տատասկի ծլերի քանակը չի պակասում, այլ ավելանում է և միայն 4-րդ կուլտիվացիայից հետո յե, զոր նրա աճելու ընդունակությունը շատ քիչ չափով պակասում է: Այս բանը յերեսում է հետևյալ աղյուսակից:

Կուլտիվացիայի ժամանակ	Տատարկի ծերի քանակը տոկոսով
12 Մայիսի	190
18 Հունիսի	155
12 Հուլիսի	70
28 Հուլիսի	23
15 Ոգոստոսի	3
5 Հոկտեմբերի	0,1

Այժմ հառկանալի յե, թե ինչու ցեղադաշտում աշնացանի ժամանակ և զարնանը մոլախոտերի քանակը զգալի չափով ավելի քիչ ե, քան ցեղ չարածդաշտում: Հասականալի յե նաև, թե ինչու վաղ ցեղը, վորը հնարավորություն ե տալիս կատարելու մի շարք մշակումներ, լիովին վոչնչացնում ե մոլախոտերը:

ՑԵԼԻ ՏԱՓԱՆՈՒՄԸ

Ցերբեմն ցեղ արած դաշտի մակերեսությը, ամառնային ուժեղ անձրեներից հետո ծածկվում են խիստ կեղեռվ կամ կղմինտով: Փորձով բոլորն ել գիտեն, փոր ճանապարհն ավելի շուտ ե չորանում, քան նրան կից փուխը վարելահողը: Վորպեսզի հնարավոր լինի խուսափել ցեղադաշտի շուտ չորանալուց՝ խիտ կեղերի և կեղեւ կապելուց առաջացող խոշոր ճեղքերի միջոցով, դրա համար անհրաժեշտ ե առատ անձրեից հետո տափանել դաշտը գմնե մի հետքով: Տափանումը կեղեր փշրելու հետ միասին վոչնչացնում ե նաև բուսնած մոլախոտերի մի մասը: Կուլտիվատորից անմիջապես հետո տափանելն անհրաժեշտ է այն բոլոր դեպքերում, յերբ դաշտը ուժեղ չափով աղտոտված ե սեղ, տատասկ և լոշ մոլախոտերով: Տափանումն այս-

տեղ անհրաժեշտ է մոլախոտերի արմատները դուրս պոկելու համար, վորոնք չեն կարելի թողնել վարելանողում, այլապես նրանք նորանոր ճյուղեր կարձակեն: Այստեղ կուլտիվացիան առանց արմատները պոկելու, ինքնըստիճանքյան կնպաստի մյուս մոլախոտերի բազմանալուն:

Վաղ հերկը և նրանից անմիջապես հետո կատարվող տափանումը հնարավորություն են տալիս պահպանելու հողում գարնանային խոնավությունները: Դաշտի մակերեսությի հաճախակի մշակումը, վոչնչացնելով մոլախոտերը, նույնպես պահպանում ե հողում յեղած ջրի պաշարը: Հողի մակերեսի փիրացումը թույլ ե տալիս անձրեային ջրերին թափանցելու վարելահողի ներքնախավերը, իսկ հողի փուխը վերնախավը դժվարացնում ե ջրի արագ գոլոշիացումը, համարյա ճիշտ այնպես, ինչպես դժվարացնում են հարզը, աղը և այլն: Ահա թե ինչու ցեղ արած դաշտում խոնավությունն այնքան ամուլը ե պահպանվում: Ահա թե ինչու ցանքսի մոմենտին ցեղադաշտը ամենաչորային տարում տպահովում ե աշնանարույսերի սերմերի համաշափ աճումը: Ահա թե ինչու, տարին ինչքան ել չորային լինի, այնուամենայնիվ ցեղ արած դաշտում հեշտությամբ կարելի յե ճարել խոնավ հողակոշտեր: Ահա թե ինչու վաղ մաքուր ցեղը լավագույն միջոց ե յերաշտի գեմ պայքարելու համար:

Շնորհիվ ցեղադաշտի խոնավ լինելուն, բույսերի բոլոր մնացորդները վտում են և ավելացնում աշնանացորենի համար անհրաժեշտ յեղող սննդարար նյութերի պաշարը:

ՄԱՔՈՒՐ ՑԵԼԵՐԸ ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ
ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ՄԻԶՈՑ ԵՆ

Բոլոր կողանտեսականները գիտեն, վոր ամեն տարի աշխանաբույսերի ցանքսերում լինում են հացի բըզեգ: Այդ բզեզը յերեմն խմբերով հարձակվում է աշխանացան զաշտերի վրա և ահագին վնաս է հաս. ցնում նրանով, վոր ուտում և վոչնչացնում է հացահատիկի զգալի մասը նրա հասունանալու ժամանակ: Կան մի շարք ուրիշ վնասատուներ ևս, վորոնք ավելի քիչ չափով են վնասում, ինչպես, որինակ, սղոցող միջատ, թելածև վորդ և այնու կանանչ արտում հաճախ կարելի յէ տեմնել դեղնացած ցողուններ, վորոնց հաւկերը վոչնչացած են: Սրանք այն բույսերն են, վորոնք վնասված են սղոցող միջատների կողմից: Առաջին հայացքից թվում ե, թե այս միջատների հասցրած մնան այսքան ել մեծ չե, սակայն իրականում այս բոլոր բզեզները, վորդերը խլում են բերքի զգալի մասը: Վնասատուները հաճախ ապրում են հողի յերեսում: Սրանում հեշտությամբ կարելի յէ համոզվել հողը վարելիս, յերբ գութանով վարելուց անմիջապես հետո թուչունները մտնում են ակոսները և ագահությամբ կլանում են այն վորդերը, վորոնք վարելուց հետո հողի յերեսն են գուրս յեկեր:

Յել արած դաշտի հաճախակի մշակումը նպաստում է հողի մեջ ապրող այս վնասատուների մեծ մասի վոչնչացմանը: Հողի յերեսը դուրս գալով, նրանք թրոշունների կեր են դառնում և սատկում են պրեկտից, անձրեցից և քամուց:

ՃԻՇՏ ԱՆՑԿԱՑՆԵԼ ՑԵԼԵՐԻ ՄՇԱԿՈՒՄԸ

Շատ կոլտնտեսությունները 1931 և 1932 թվականներին ունեյին վոչ միայն ցելի պլան, այլ նաև վարեցին այս ցելերը: Սակայն ցել արվեց իսկապես միայն այն առաջակոր և կազմակերպված կոլտնտեսություններում, ուր վարչությունը, բրիգադիրները և հենց իրենք կոլտնտեսականները հոգ եյին տանում կոլտնտեսային բերքի համար: Այս կոլտնտեսությունները 1932 թվականին նտացան աշխանացան մշակույթների առատ բերք, կատարեցին հացամթերման պլանը և իրենք ել ապահովվեցին սերմացուներով և մթերքներով: Սակայն վոչ բոլոր կոլտնտեսություններն եյին, վորոնք ցել անելու գործը մինչև վերջ հասցրին: Կոլտնտեսություններից շատերը տեղեկագրերում գեկուցեցին ցել անելու մասին և դրանով ել հանգստացան: Ամառվա ընթացքում հողամշակումը կամ բոլորովին չեր կատարվում, կամ թե կատարվում եր վնասարարության համոզ անփութությամբ: Այս դեպքերում ցել արած դաշտերը մոլախոտերով ավելի շատ եյին վարակվում, քան վորեե ամայի և իրեն բախտին թողնված դաշտ օանքսի ժամանակ այսպիսի «ցելերը» բանի պետք չեյին գալիս ցանելու համար: Պետք եր լինում նախ հնձել մոլախոտերը, չորացնել նրանք, այրել, ապա վարել, տափանել և միայն այս բոլոր աշխատանքները կատարելուց հետո կարելի յեր ձեռնարկել ցանքսին: Սակայն հայտնի յե, վոր փիսրուն վարելահողում ջրալի մոլախոտերը շատ գժվարությամբ են չորանում: Դրա համար ել հնձված մոլախոտերի վոչնչացումը պահանջում եր մեծ թվով բանվորական ձեռքեր և յերկար ժամանակ: Այսպիսի վնասարարական ցելերում աշխանաբույսերը

ուշ եյին ցանվում: Դժվար չե գուշակել, վոր այսպի-
սի ցելերում ցանված աշնանային մշակույթները վո-
շնչով չեյին տարբերվում խոզանում ցանված աշնա-
նացորենից:

Ահա թե ինչու յուրաքանչյուր կոլտնտեսություն,
յուրաքանչյուր բրիգադ, ծանոթանալով ցել անելու
պլանին, պարտավոր և ժամանակին կատարելու այն
բոլոր աշխատանքները, վորոնք անհրաժեշտ են մոլա-
խոտերը վոչնչացնելու և ցելադաշտի մակերեսը փրկ-
րացնելու համար, պահպանելով ցելերի մշակման բո-
լոր կանոնները:

Հիշելով այն մասին, վոր մաքուր ցելն աշնանա-
ցան բույսերի բարձր բերքի միակ ուղին ե, վոր նա,
անկախ յեղանակից, միշտ ել առատ բերք և տալիս,
պետք և մշակել ցելը և ցելավոր դաշտը պահել որի-
նակելի մաքրության մեջ: Պետք ենկատել, վոր Յեր-
կրհողվարչության պլանի համաձայն, մաքուր ցելերը
պետք ե. արվեն այն ռայոններում, ուր շարքահերկ
մշակույթները տնտեսությունն այնքան չեն ձանրա-
բեռնում, ինչպես կուբանի հարավային ռայոններում:

Այս հանգամանքը վճռականապես թույլ է տա-
լիս լծկան ուժը տեղափոխել ցել անելու աշխատանքի
վրա:

Բնական խոտհարքերի և արոտատեղերի լայն տա-
րածումն այն ռայոններում, վորտեղ ցելերը հայտնի
տեղ են գրավում, հնարավորություն և տալիս ցելե-
րի մշակումը կազմակերպելու՝ լավ և եժան կերեք ձեռք
բերելու պայմաններում: Սա հեշտացնում է ցելերի
հերկումն ու մշակումը նույնիսկ այն դեպքում, յերբ
կենդանի լծկան ուժն աշխատանքով շատ և ձանրա-
բեռնված, վորովհետև թե ձիերը և թե յեզները լավ
կերակրվելով, կտան արտադրանքի բարձր նորմաներ:

Ցելերը մշակելու համար լայն չափով պետք ե ոգտա-
գործել տրջառներին և մասամբ կովերին:

Սակայն պետք ե հիշել, վոր շոք յեղանակին աշ-
խատելիս ամեն կերպ պետք ե թեթևացնել արջառնե-
րի և կովերի աշխատանքը: Մանավանդ յերկար ընդ-
միջում անել ցերեկին, և ավելի տաք ժամերին ար-
ջառների և կովերի լուծն արձակել: Բայց վորպես-
զի աշխատանքը չտուժի, դրա համար հարկավոր ե
ընդհանրապես աշխատանքն սկսել ինչքան կարելի յե-
վաղ տուավոտյան, շոքերն սկսելիս ընդմիջում անել,
իսկ շոքերն անցնելուց հետո վերսկսել աշխատանքը
և շարունակել մինչև ուշ յերեկոյան:

ՎԱՂ ՑԵԼԸ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ Ե ՏԱԼԻՄ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՑԱՆԵԼՈՒ

Հաճախ պատահում ե, վոր չորային յեղանակի
ոլուտմառով հնարավոր չի լինում աշնանացան մշա-
կույթները ժամանակին ցանելու ցելերում: Ոգոստոս
և սեպտեմբեր ամիսներին հողը դժվարությամբ և մը-
շակվում և վարելիս անյափիսի հողակոչտեր են առա-
ջանում, վորոնք վոչ տափանին են հպատակվում և
վոչ ել շարքացաների դիսկերին: Դրա հետ մեկտեղ
ցանքսն ուշ սկսելը նախ՝ սպառնում ե վիժեցնել
ցանքսի ժամկետերը, իսկ յերկրորդ՝ աշնանացորենի
ուշ ցանքսը հուսատու չե յերկրամասի բոլոր հյուսի-
սային մասերում: Բացի այդ, այժմ արդեն դեպի
հյուսին և արածածվում և ամբողջ յերկրորդ հնգամ-
յակի ընթացքում տարածվելու յե աշնանացան ցորե-
նը: Դրա համար ել վաղ մաքուր ցելերը հատուկ նշա-
նակություն են ձեռք բերում յերկրամասի վողջ հյու-
սային մասում, վորպես աշնանացորենի ցանքսի

համար միակ հուսալի վայրում։ Ամենահյուսիսային և ամենաչորային ռայոններում աշնանացը բենը պետք է ցանվի բացառապես մաքուր և խերսոնյան ցելերի վրա, փորովիետե միայն մաքուր և խերսոնյան ցելերն են, փորոնք հնարավորություն են տալիս ժամանակին ցանելու աշնանացան մշակույթները, փորոնք ապահովում են ծլերի զարգացումն աշնանից, բույսերի դիմացկունությունը ձմրան ցըտերին, կայուն և ժշտական բերք։

ՎՈՐՏԵԼ ՊԵՏՔ Ե ԿԻՐԱՌԵԼ ՄԱՔՈՒՐ ՑԵԼԵՐԸ

Մաքուր ցելերն առաջին հերթին պետք է կիրառվեն արևելյան ամենաչորային ռայոններում, վորպես ազգութեանիկական հիմնական միջոցներից մեկը, փորն այստեղ ապահովում է աշնանացան հացաբույյուրի բերքը։ Աշնանացը բենը պետք է ցանվի այստեղ բացառապես մաքուր և խերսոնյան կամ կուլիսյան ցելերում։

Սրան վերաբերվում են հետեւյալ ռայոնները. Պրոլետարսկի, Զիմոֆիկովսկի, Ռեմոնտնենսկի, Կալմիցկի, Վինոգրադնենսկի, Թուրքմենական։ Այս ռայոններում առանց մաքուր և կուլիսյան ցելերի չի կարելի քիչշատ տանելի բերք ստանալ։ Իսկ առանձին տարիներում, սովորական ձևերով մշակելիս, աշնանացանը փշանում է ամբողջովին։

Յերկրորդ զոտին, փորտեղ մաքուր և կուլիսյան ցելերը նույնպես հանդիսանում են ամենահուսատու միջոց՝ աշնանացան մշակույթների բերքն ապահովելու համար, ընդգրկում են հետեւյալ հողագործական ռայոնները. Զենայի տերեկամերձ ռայոնները, Ալեքսանդրովսկի, Վորոնցովո-Ալեքսանդրովսկի, Պրիկումսկի,

Բլագադարնենսկի, Պետրովսկի ռայոնի արևելյան մասը, Գեորգիևսկու, Նեվինոմիխանկու, Ստավրոպոլի, Իզորբիլո-Տիշչենսկու, Հանքային Ջրերի, Կուրսավսկու արևելյան մասը, Մեղքեթենսկի, Սալսկի, Կոնստանտինովսկի, Տագինսկի, Մորոզովսկի, Ոբլիվսկի, Վեշենսկի, Վերին-Դոնյան, Միլերովսկու, Կամենսկու և Տարասովսկու արևելյան մասը. Այստեղ մաքուր ցելերը պետք է ստեղծեն ապահով վարելահող, աշնանացան բույսերի կայուն բերքի համար։

Յերկրամասի հյուսիսային ռայոններում (Ոբլիվսկի, Մորոզովսկի, Վեշենսկի, Վերին-Դոնյան, Միլերովսկի, Յիմլյանսկի, Սալսկի) աշնանացան ցորենները, փորոնք շատ են տուժում սառնամանիքներից, պետք է ցանվեն միմիայն մաքուր կամ կուլիսյան ցելերում. Միայն ցել արված զաշտումն է, փոր ապահովվում է աշնանացան բույսերի ցանքուր վաղ ժամեկտերում։ Իսկ վաղ ժամեկտերն ապահովում են ծլերի լավ արմատակալումն ու զարգացումն աշնանից։ Միայն այս միջոցով են, փոր հացաբույյուր կարողանում է հաջողությամբ անցկացնել ձմեռը. Ամուր ծլերը շատ քիչ են տուժում ձմեռ ժամանակ, իսկ թույլ զարգացած ըլերն ընդհանրապես ամբողջովին վոչնչանում են։

Բոլոր հյուսիս-արևմտյան ռայոններում—Լենոնկալիտվենսկի, Միլերովսկի, Տարասովսկի, Կամենսկի, Շախտինսկի, Նովօչերկասկի, Մյամիկյան, Տաղանդովի, Մատվեյեվո-Կուրգանսկի, Ազովյան, Մեշետինսկի—աշնանացան ցորենները լիակատար հաջողություն կարող են ունենալ միայն մաքուր և կուլիսյան ցելերում, բանջարանոցային հողերում և վաղ հերկված արածատեղիներում ցանվելու դեմքում։

Դրա համար այստեղ ևս մաքուր ցելերը պետք է դարձնել մշտական և ապահով վարելահող։ Բացի դրա-

նից, այս ռայոններում դաշտերի չափից ավելի վարակված լինելը պահանջում է մաքուր ցելերի կիրառումը հաճախ վորպես միջոց՝ մոլախոտերի գեմ պայքարելու համար:

Բոլոր վերոհիշյալ ռայոններում մաքուր ցելերը կիրառվում են վորպես յերաշտի գեմ պայքարելու ամենաապահով միջոց, վորպես ամենառուսակի յեղանակ՝ կայուն աշնանային վարելահող ստեղծելու համար:

Այս բոլոր ռայոններն ունեն չոր կլիմա, իսկ նրանցից հյուսիսայինները դրանից բացի ունեն նաև թիստ ձմեռ:

Յերկրամասի մնացած մասը—կուբան, Նախալեռնային, Սևծովյան ռայոնները—ունենալով բավականաչափ քանակությամբ մինուրտային տեղումներ, կարիք չունեն մաքուր ցելերի, վորպես յերաշտի գեմ պայքարելու ապահով միջոցի: Միայն Տեմրյուկի ռայոնը և Մենապա ռայոնի մի մասն ե, վոր գտնվելով մերձափյան յերաշտային պայմաններում, մաքուր ցելերի կարիք ունեն՝ յերաշտից ապահով մնալու համար: Բոլոր առանձին ռայոններում մաքուր ցելերը կորցնում են իրենց նշանակությունը, վորպես յերաշտի գեմ պայքարելու զենք: Մենք արդեն տեսանք, վոր կուբանի փորձակայանի պայմաններում աշնանացան ցորենը մոտավորապես միատեսակ բերք ե տալիս թե մաքուր և թե շարքահերկային ցելերում: Ճիշտ ե, վոր դա այդպես ե փորձակայանում, վորտեղ դաշտերը մաքուր են պահպան և ցանքսի ժամկետերը ճշտուեն պահպանվում են: Մասսայական ցանքսերում մաքուր ցելերը ամենաբարձր բերք են տալիս նաև այստեղ: Սակայն այստեղ ցելի ուժը և նշանակությունը գիշեր ժամանակ խոնավություն կուտակելու ընդու-

նակության մեջ չի կայանում: Խոնավությունն այստեղ բավականաչափ կա: Ճիշտ մշակելու դեպքում աշնանացան բույսերը ցելում տալիս են այնքան բերք, ինչքան վոր տալիս են յեգիպտացորենի դաշտում ցանվելիս: Այստեղ բերքի իշեցման հիմնական պատճառը մոլախոտերն են: Սակայն մենք տեսանք, վոր մաքուր ցելը ամենակարող միջոց ե վոչ միայն յերաշտի, այլ նաև մոլախոտերի գեմ պայքարելու գործում: Հենց դրա համար ել այստեղ, աղտոտված հողերի վրա կատարված ցելը հանդիսանում ե նաև աշնանացան մշակույթների քավագույն նախորդող: Այստեղ մաքուր ցելը պետք ե կիրառվի վորպես ամենաուժեղ և ամենաարագ ներգործող միջոց՝ մոլախոտերի գեմ պայքարելու համար: Վորովհետև կովկասի հողերը մոլախոտերով շատ են վարակված, դրա համար ել յերկրորդ հնդամյակում մաքուր ցելը դեռևս հաճախ պետք ե գործադրվի կոլտնտեսային դաշտում և կուբանում:

Պետք ե նկատել վոր կուբանում արոտատեղիներ վարելու հետ միաժամանակ ցել անելը (արոտատեղիները հերկվում են հացարույսերի բերքահավաքն սկսելու մոտեր, հունիսի վերջերին) լավ միջոց ե հանդիսանում՝ մոլախոտերի գեմ պայքարելու համար:

Կուբանում աշնանացան բույսերի ամենամաքուր գաշտերի համար սովորաբար հերկվում են արածատեղիները, իհարկե հունիսի վերջերին: Այդ իսկ պատճառով այստեղ պետք ե լայն չափով կիրառել հենց այնպիսի զուգակցություն, ինչպիսին են՝ արածատեղիները և ուշ ցելը:

Կուբանում ուշ ցելերը կարելի յե վարել հնձված խոտը հավաքելուց հետո կամ ցանովի արոտատեղիների վրա:

ՎՈՐՏԵՂ ԵՆ ՎՆԱՍ ԲԵՐՈՒՄ ՄԱՔՈՒՐ ՑԵԼԵՐԸ

Մաքուր ցելերը վնասակար միջոց են հանդիսաւնում բոլոր ավազախառն և ավազոտ հողերի համար: Վեշենսկի, Միլերովսկի, Տարասովսկի, Ռիլիվսկի, Յիմյանսկի, Կոնստանտինովսկի և այլ ռայոններում, վորտեղ կան ավազոտ հողեր, մայուր ցելերը պեսք և սրգիլին ավազոտ հողերի բոլոր հողամասերի համար:

Փխրուն, շուտ փոշիանալու յենթակա ավազոտ հողերը, հերկվելու չոր յեղանակին մաքուր ցելի համար, հաճախակի մշակման հետևանքով կարող են արագությամբ ծածկվել ավազի շերտերով: Այս դեպքում վարելահողն անվնաս պահելու գործը վատանդի յենթարկվում և ավազը կարող է տարածվել նաև մոտակա գաշտերում:

ԽԵՐՍՈՆՅԱՆ ՅԵՎ ԿՈՒԼԻՍՅԱՆ ՑԵԼԵՐ

Կուլիսյան և խերսոնյան ցելերը մոլախոտերի և յերաշտի դեմ պայքարելու գործում իրենց ունեցած նշանակությամբ համարյա հավասար են մաքուր ցելերին: Այս ցելերը մոտավորապես մշակվում են այսպես, ինչպես մաքուր ցելերը: Սակայն, թե խերսոնյան և թե կուլիսյան ցելերն ամառվա ընթացքում չեն ազատվում մշակույթներից: Կուլիսյան ցելերի վրա գարնանը ցանվում են շարքահերկ մշակույթներ (յեղիպտացորեն, սորգո, արևածաղիկ) 1—3 շարքով, վորոնց միջի կան մեծ շարքամիջյան տարածություններ:

Այն կորոնտեսություններում, վորտեղ կուլիսյան ցելի շարքամիջերի մշակումը և աշնանացան բույսերի ցանքսը կատարվում են ձիաքարշ գործիքներով, շարքերը մեկը-մյուսից այն չափով են հեռու պատրաս-

տում, վոր նրանց միջև 1 կամ 2 ձիաքարշ շարքացաններ կարողանան ազատ անց ու դարձ անել: Այն ժամանակ շարքահերկ բույսերը ցանվում են 1 շարքով: Հենց դա յել կլինի խերսոնյան ցել:

Յեթե շարքամիջերի մշակումը և ցանքսը պիտի կատարվեն տրակտորաքարշ ինվենտարներով, ապա այդ դեպքում կուլիսների և շարքերի միջև անհամեմատ ավելի լայն տարածություն են թողնում: Այս դեպքում կուլիսներում տեղափորում են 2-3-4 շարք յեղիպտացորեն կամ արևածաղիկ: Սուածին հայացքից թվում ե, թե այդպիսի միջակ ցելերը, վորոնք միջանկյալ դիրք են դրափում մաքուր և շարահերկ ցելերի միջև, նպատակահարմար և ձեռնտու չեն: Սակայն, իրականում դա այդպես չե: Յերաշտի և մոլախոտերի դեմ պայքարելու գործում կուլիսյան ցելերն ունեն այն առավելությունները, ինչպիսիներ վորումի մաքուր ցելը: Նրանք հնարավորություն են տալիս չորային ռայոններում ժամանակին կատարելու աշնանացան բույսերի ցանքսը: Սակայն նրանց տարբերությունը մաքուր ցելերից և առավելությունները կայանում են նրանում, վոր նրանք ավելի շատ են բարձրացնում աշնանացան հացաբույսերի ձմեռվան դիմանալու ընդունակությունը, քան մաքուր ցելերը:

Բանը նրանումն ե, վոր մի ամբողջ շարք ռայոններում, մանափանդ յերկրամասի կենտրոնական մասում գտնվող և Յեյա գետին հարակից ռայոններում (Պավլովսկի, Կուչչևսկի, Տիլորեցկի, Ստարոմինսկոյ, Կանևսկոյ, Յեյսկի) աշնանացան բույսերը սակավածյուն ձմեռներին հաճախ փչանում են: Պետք ե ասել, վոր այստեղ աշնանացան բույսերը մանափանդ խիստ վնասվում են վաղ գարնանը, յերբ ցելեկները հողը հալչում ե, իսկ գիշերները սառչում: Զյան ձածկո-

ցից մերկացած հողի փոփոխակի հալչելը և սառչելն առաջ ե բերում աշնանացան մշակույթների արմատների ճեղքվածք, նրանց փոշնչացում։ Իսկ այս յերեվույթը քիչ չափով ծանոթ ե բոլոր արևելյան ուայոններում, վորտեղ փչում են ուժեղ ձմեռային քամիներ։ Ի միջն այլոց պիտի ասել, վոր յերբ արևելյան ուոյններում ձմեռները սակավածյուն են լինում, հաճախ ուժեղ քամիները քշում և տանում են նույնիսկ մաքուր ցելերի վարդած հողաշերտը՝ աշնանացանների ծլերի հետ միասին։

Այս յերկու գեղքերումն ել աշնանացան դաշտերի ձյունը պահպանելու նպատակով ավելի լավ և ձմեռվա համար թողնել շարքահերկ մշակույթների ցողունները, իսկ մենք զիտենք, վոր ձյունը պահպանում ե ծլերը և չի թողնում, վորպեսզի հերկված հողաշերտը քամիներից քշվի և տարվի։ Ձմեռվա համար դաշտում թողնված շարքահերկերի կուլինները կամ շարքերը լավ միջոց են հանդիսանում աշնանացան դաշտերի ձյունը պահպանելու համար։

Մանավանդ այնպիսի ուայոնների համար, վորտեղ աշնանացան բույսերը տուժում են ձյան քշվելուց, անհրաժեշտ ե լայն չափով կիրառել կուլիսյան և խերսոնյան ցելերը։ Նրանք յերաշտից պաշտպանում են արտերը, լավ միջոց են հանդիսանում մոլախոտերի դեմ պայքարելու դորձում և հիմնալի կերպով պահպանում են աշնանացան բույսերը ձմեռ ժամանակ փչանալուց։ Կուլիսյան ցելերի վրա ցանված աշնանաբույսերի բերքն զգալի չափով ավելի ցածր ե լինում, քան մաքուր ցելերի վրա, սակայն զրա փոխարեն տարեց-տարի բերքն ավելի կայուն ե դառնում, վորովհետեւ աշնանացաններն այստեղ ձմեռ ժամանակ չեն յենթարկվում փոչնչացման, ինչպես մաքուր ցե-

լերում, և բացի այդ, կուլիսները ցել անելու տարում տալիս են մի քանի ցենտներ յեզիպտացորենի հատիկ կամ արևածաղկի սերմ։

Խորհանտեսության գիտական-փորձնական կայանը 1931 թվին հատուկ փորձ կատարեց կուլիսյան ցելերն ուսումնասիրելու համար։ Այժմ տեսնենք, թե զանազան ցելերի վրա ցանված բույսերը մի՛ նեկտարից քանի ցենտներ բերք են տվել։

Կուլիսների անուններ	Հեռավորություններ կուլիսների միջին	Բերքը ցենտներով
Մաքուր ցել . . .	—	16,3
Միշարքային . . .	20 մետր	14,7
Յերկարքային . . .	20 »	15,5
Յերկարքային . . .	10 »	13,5
Միշարքային . . .	5 »	17,4
Միշարքային . . .	2 »	12,5

Այստեղ մի տարվա փորձից յերեսում ե, վոր կուլիսյան ցելերը համարյա նույնքան բերք են տալիս, ինչքան վոր մաքուր ցելերը։

Այս փորձի ժամանակ աշնանաբույսերի ցանքար կատարվել ե ըստ լայնության կուլիսներում։ Լայն չափով պետք ե փորձել ցանքսի այս ձեր, վորովհետեւ կուլիսների միջև կատարքած ցանքսն առաջ ե բերում ցանքսատարածության կորուստ, վորն զրաղված ե կուլիսների կողմից։

ՑԵԼ ԱՆԵԼԸ—ՏՆՏԵՍԱ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՐՏԱԿԱՆ ԽՆԴԻՐ Ե

Կուլիսների գաղտերի բերքը բարձրացնելու գործում վաղ ցելերի ունեցած նշանակությունն այն-

քան մեծ ե, յերաշտի և մոլախոտերի դեմ պայքարելու համար նրանց ուժն այնքան անվիճելի յե, վոր կոլտնտեսականների միջև չկա մի վորևե մեկը, վոր կասկածի նրանց ողտակարության մասին։ Միայն կոլտնտեսային կարգերի թշնամիները, միայն կուլակի պոչերն են, վորոնք դեմ լինելով կոլեկտիվ տնտեսության, մաքուր ցելերի մասին կզատմեն ամեն տեսակի չեղած հեքիաթներ, առելով, վոր մաքուր ցելերը 1932 թվին աճեցրին վնասակար խոտեր (քոլեր) և այն, վորպեսզի այդպիսով վիժեցնեն ցել անելու ժամկետերը։

Միայն ծույլերը և հետամնաց կոլտնտեսականները, վորոնք զասակարգային թշնամու հետեւց են գնում, վատ կմշակեն ցելերը։ Բոլոր ազնիվ կուտնտեսականները, նրանք, ովքեր վճռականապես կանգնել են կոլտնտեսային շինարարության ճանապարհի վրա, ովքեր պատվով պայքարում են սոցիալիստական դաշտերի բարձր բերքատվության համար։ Այդպիսիներն ահա պետք ե ամենայեռանդուն կերպով պայքարեն մաքուր ցելեր ժամանակին վարելու, և վողջ ամառվա ընթացքում, մինչև աշնանացանը այդ ցելերը լավ մշակելու համար։

Մաքուր ցելերի համար պայքարելու գործում կուտնտեսականների առաջավոր հանդիսացող մասն իր անձնական որինակով պետք ե վարակի մյուսներին և ցույց տա, թե վաղ գարնանացանից հետո ինչպես պետք ե ողտագործել քաշող ուժը ցել անելու համար, և պետք ե բարձր վորակական ցուցանիշներ ձեռք բերի վողջ ամառվա ընթացքում ցելադաշտերը մշակելու գործում։ Ակտիվիստները ժամանակին պետք ե հայտնաբերեն կուլակային, վնասարար տարրերի այն բոլոր փորձերը, վորոնց նպատակն ե արգելակ համ-

դիսանալ ցել անելու աշխատանքին և կատարել վատ վորակի աշխատանք։ Իզուր չե, վոր ասված ե—«Ո՞ւմ, ինչ ոգուտ նրանից, վոր դու հարվածային ես, բարեխիղջ կոլտնտեսական, լավ ես աշխատում, յեվ ու շուրջը գտնված մի քանի ծովույթը յեվ գողեր ու աշխատանից յեվ վողջ կոլտնտեսությունը բանուն են տալիս» (Հարվածային կոլտնտեսականների համամիութենական համագումարի դիմումից)։

Ի՞նչ ՊԵՏՔ Ե ՀԻՇԵԼ ՄԱՔՈՒՐ ՑԵԼԵՐԻ ՄԱՍԻՆ

Հյուսիսային կովկասի կուտնտեսային գաշտերն ուժեղ չափով վարակված են մոլախոտերով, վորոնք իջեցնում են աշնանացան հացաբույսերի բերքը։

Յերկրամասի արևելյան և հյուսիսային մասում բերքը շատ ե տուժում յերաշտից։

Չորային սայոններում բերքը յերաշտից փրկելու շափագույն միջոցը—դա մաքուր ցելն ե։

Բոլոր սայոններում մաքուր ցելը հանդիսանում է մոլախոտերի դեմ պայքարելու լավագույն միջոց։

Հողի վերնաշերտը հաճախակի մշակելու շնորհիվ մաքուր վաղ ցելը հողի մեջ ե պահպանում և կուտակում անձրևալին ջրերը։

Յեթե ցելադաշտերի մոլախոտերը հաճախ քաղանվեն, ապա դրանով հնարավոր կլինի լիովին վոչնչացնել միամյա մոլախոտերը և նվազեցնել բազմամյա մոլախոտերի աճումը։ Մաքուր ցելը հեշտացնում ե պայքարը վնասատուների դեմ, արագացնում ե բուսական մնացորդների փոտումը և հանքային մնունդարար աղերի գոյացումը։

Մաքուր ցելն ապահովում ե աշնանացան բույսերի ժամանակին կատարվող ցանքուր չորային ուայոն-

ներում և բարձրացնում ե աշնանացան հացարույսերի՝ ձմեռվան դիմանալու ընդունակությունը:

Ինչքան շուտ արվի ցելը, այնքան ավելի կբարձրանա բերքը, այնքան ավելի հեշտ կլինի պայքարել մոլախոտերի և փաստուների դեմ և այնքան ավելի շատ խոնավություն կկուտակվի հողում:

Ցելը պետք ե վարել հասկավորների ցանքն ավարտելուց հետո, իսկական գությաններով, 12—18 ԱՄ խորությամբ: Վարելու հետ միասին պետք ե նաև տափանել:

Ամռանը դաշտի մակերեսը մշակվում ե 2—3 անգամ արորներով և կուրտիվասորներով: Անձրևային ամռանը դաշտը մշակվում ե այնքան, ինչքան փոր պահանջում ե մոլախոտերի աճումը:

Բոլոր չորային ռայոններում մաքուր ցելը պետք է մտնի ցանքսաշըջանառության մեջ՝ փորպես կայուն և ապահով վարելահող:

Կուբանում մաքուր ցելերը պետք ե կիրառվեն մոլախոտերով խիստ վարակված հողերում, միաժամանակ ոգտագործելով ցել արված հողերը արոտատեղիների համար:

Այն ռայոններում, ուր աշնանացանները տուժում են ձմեռվա սառնամանիքներից, մաքուր ցելերին զուգընթաց պետք ե կիրառվեն նաև կուլիսյան ցելերը, վորոնք հեշտացնում են ձյուն պահելու գործը և լավացնում են աշնանացան դաշտի մակերեսույթը:

Մաքուր ցելը՝ դա աշնանացան հացարույսերի բերքը բարձրացնող ամենավստահելի աղբոտեինիկական միջոցառումն ե:

Ցել անելը, ցելերի մշակումը—կարենը տնտեսական քաղաքական խնդիր ե հանդիսանում, վորի շուրջը մորիվզացիայի պետք ե յենթարկվեն բոլոր նրանք, ովքեր պայքարում են կոլտնտեսային բերքի համար:

Բերքատվության բարձրացումը ավյալ մոմենտի ամենակարենոր խնդիրն եւ Աշնանացանների բերքը բարձրացնելու ուժեղ լծակ հանդիսացող մաքուր ցելերը լիովին պետք ե ոգտագործվեն Հյուսիսային Կովկասի կոլտնտեսականների կողմից, վորպես կոլտնտեսություններն ամբացնելու միջոց:

Կոլտնտեսականների կազմակերպվածությունը, մարտական պատրաստակամությունը՝ ցելերի ժամկետերի և մշակման վորպակի համար պայքարելու գործում—պետք ե ապահովեն ցելի մշակման վերաբերյալ կուսակցության արած բոլոր ցուցմունքների կատարումը:

Ցել անելու վերաբերյալ պատասխանատու խընդիրները գրվում են մանավանդ չորային ռայոնների կոլտնտեսությունների վրա, վորովհետև այդ ռայոններում ցելերը ազգոտեխնիկական ամենառուժեղ միջոց են հանդիսանում բերքը բարձրացնելու պայքարում: Այստեղ, բերքի համար տարվող պայքարի այդ փորձված գենքը պետք ե գործի դնել բոլցեկիլյան այնպիսի վճռականությամբ, ինչպիսի վճռականությամբ վոր անցկացըին գարնանացմանը մի շաբթ չորային ռայոնները (Ռեմոնտնենսկի, Պրոլետարսկի, Վինոգրադսկի, Թուրքմենական ռայոնները):


Մաքուր վաղ ցելերը—յերաշտի և մոլախոտերի դեմ պայքարելու այդ լավագույն զենքը լիովին պետք ե ոգտագործվի 1933 թվին, բերքատվությունը բարձրացնելու, կոլտնտեսություններն ամրացնելու, կուսակցության, բանվորների և կոլտնտեսային գյուղացիության առաջնորդ ընկ. Ստալինի «բոլոր կոլտնտեսականներին ունեոր դարձնել» լոգունդն իրագործելու համար:




ԹԱՎԱՆԴԱԿԻԹՅՈՒՆ

Մաքուր ցելն ապահովում ե աշնանացանի բերքը	2
Ինչո՞ւ յե մաքուր ցելը բարձրացնում բերքատվությունը	5
Մաքուր ցելը յերաշտի դեմ պայքարելու ամենալավ միջոցն ե	7
Մաքուր ցելերի տեսակները	8
Ցերք վարել ցելերը	14
Ցելը վարելու խորությունը և զործիքները	15
Խնամել ցելաշտի մակերեսը	18
Մոլախոտերի դեմ պայքարելը-դաշտերի մշակման հիմնական խնդիրն ե	19
Ցելի տափանումը	22
Մաքուր ցելերը ֆասատուների դեմ պայքարելու կարեռագույն միջոցն են	24
Ճիշտ անցկացնել ցելերի մշակումը	25
Վաղ ցելը հնարավորություն ե տալիս ժամանակին ցանելու	27
Վաղանեղ պետք ե կիրառել մաքուր ցելերը	28
Վաղանեղ են վաս բերում մաքուր ցելերը	32
Խելսոնյան և կոլխոզան ցելեր	32
Ցել անելը անտեսական-քաղաքական մարտական խնդիր ե	35
Ի՞նչ պետք ե հիշել մաքուր ցելերի մասին	37

Стветственный за выпуск А. Явакян
Технический редактор Г. М. Маркарьян
Сдано в набор 10/VI 1933 г.,
Подписано в печать 15/VI 1933 г.
Статформат А6-125x176, Издание № 3249
Уполномочит Б-271, Заказ № 2881
О б'ем 11/4 печ, лист. Тираж 2000
Тип. им. "Стачки 1902 г." СККПО
Г. Ростов н-Дону



ՀՀ Ազգային գրադարան



NL0288576

ԳԻԱԾ 20 ԿՈՊ.
Цена 20 коп.

17512

239072

Հ



На армянском языке

А. И. Ловлинсков

Поднять и во-время обработать
чистые пары

И-во „СЕВЕРНЫЙ КАВКАЗ“

ԳՐԱՊԱՌԵՎԱՅՐ

ԱՊՈԽՈՎ-ԴՈԽ ՄՈՍԿՎԻԿԱՑԱ ՓՈՂ. № 53
ԳՐԱԿԵՆՏՐՈՒ (ԿՐԻԳՈՑԵՆՏՐ)